



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՑՈՒՄ 1870 ԱՄԻՆ

ՆԻԱՏ ՅԻՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ

24 ՆՈՅԵՄԲԵՐ 1872



ԿՈՍՏԱՆՅՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ա. ԿԱՐԳԱՆԵԱՆԻ

—1872—

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ԲԱՑՈՒՄ 1870 ԱՄԷՆ

ՆԻՍՏ ԾԳ.

24 ՆՈՅԵՄԲԵՐ 1872

ՆԱԽԱԳԱՀ. — ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԿ

ԱՏԵՆԱՊԵՏ. — ՕՏԵԱՆ Գ. ԷՖ. (Ա. Ատենապետ)

ԿԱՐԳ ԽՆԴՐՈՑ

1. Վաւերացումն նորընտիր երեսփոխանաց :
2. Ընտրութիւն Գաղաքական ժողովոյ 4 անդամոց :
3. Կոնդակ վեհ. կաթողիկոսի :
4. Ատենական կանոնադրութիւն :
5. Կաթողիկոսական եւ Պատրիարքական յարաբերութիւնը :
6. Հարցումն ինն երեսփոխանաց :
7. Առաջարկութիւն տասն եւ եօթն երեսփոխանաց Սահմանադրութեան վերաբնութիւնը Եանձնաժողովոյ մը յանձնելու համար :

Ատենը բացուեցաւ ժամ 8 1/2ին 'ի ներկայութեան մեծադոյն մասի ժողովոյ, 50 երեսփոխանաց : որոց թիւը 57 ի հասաւ 'ի վերջէ : Ատենապետ էֆէնտին որուան կարգին չանցած՝ երեսփոխանաց ներկայութեան տուժարը քննելով՝ ծանոց թէ եկեղեցական երեսփոխաններէն :

- Տ. Երեմիա Եպիսկոպոս
- Տ. Սիմէօն
- Տ. Խորէն Վարդապետ Կիրոյեան ժամանակէ մ'ի վեր պաշտօնով մեկնած են մայրաքաղաքէս, եւ թէ՛ ուրիշ հինգ աշխարհական երեսփոխանք, որք են :
- Սըվաճեան Յարութիւն էֆէնտի
- Սըվաճեան Սարգիս »
- Պէնկլեան Յովհաննէս »
- Տամատեան Մկրտիչ »
- Մարգարեան Յովհաննէս »

անցնալ նիստին Գ. Էնդամ բացակայութիւն ունեցած են, իսկ Նիկոնիկոյ դաւառին երեսփոխան Մկրեան Սարգիս էֆ. ին իւր ընտրութենէն 'ի վեր՝ բնաւ ներկայ չ'անուած չէ Ընդհ. ժողովոյ նիստերուն :

Ատենապետ էֆ. ի այս յայտարարութեան վրայ Պատր. Փոխանորդ Տ. Յովհաննէս քահանայ Մկրեան ծանոց թէ Մկրեան Սարգիս էֆ. հրաժարած է իւր պաշտօնէն, իսկ ժողովը միւս ութը երեսփոխաններն հրաժարաւ հրատարակեց եւ անոնց տեղ նոր ընտրութիւն որոշեց : Յետոյ Ատենապետ էֆէնտին երկու նորընտիր երեսփոխանաց հրաժարողներն ներկայացոյց ժողովին, մին՝ Գաբրիէլեան Պողոս էֆ. ի եւ միւսը՝ Հալաճեան Մեղքոն էֆ. ի կողմէ ուղղեալ, որոնք իրենց անձնական ծանր զբաղմունքներն պատճառ ցոյց տալով՝ հրաժեշտ կուտային իրենց երեսփոխանական պաշտօնէն :

Ժողովն ընդունեց նաեւ այս երկու երեսփոխանաց հրաժարականը եւ անցաւ օրուան կարգին :

1 ՎԱԽԵՐԱՑՈՒՄՆ ՆՈՐԸՆՏԻՐ ԵՐԵՍՓՈՒԱՆԱՅ

Երեսփոխանական քանի մը նորոգ ընտրութեանց վրայ Գործադիր Յանձնաժողովոյ կողմէ երկու տեղեկագրեր կային եկած , զորս Ատենապետ էֆէնաին ժողովին ներկայացոյց :

Նոյն տեղեկագրերն յատենի ժողովոյ կարգացուեցան , որոց պատճէններն ահաւասիկ ,

Ամենապատիւ Սրբազան Հայր] Նախագահ Ազգ . Երեսփ . Ժողովոյ

Աղթամարայ վիճակէն երեսփոխան ընտրուած է

Առաքել էֆ . Յ . Տատեան

Հալէպ , Անտիոք , եւ Անթափ միացեալ վիճակաց կողմանէ երեսփոխան ընտրուած է Յովհաննէս էֆ . Կիւմրուչեան

Ձէշիկթաշի հրաժարեալ երեսփոխան Մկրտիչ էֆ . Աճէմեանի տեղ նորոգ ընտրութիւն կատարուելով , 280 ընտրողներէն 36 ին մասնակցութեամբը երեսփոխան ընտրուած է բացարձակ առաւելութեամբ

Յարութիւն էֆ . Մարգարեան քուէ 20 ;

Արապկիրի վիճակին հրաժարեալ երեսփոխան Գասպար էֆ . Չրաքեանի տեղ երեսփոխան ընտրուած է

Մ . Կարապետ էֆ . Խաչիկեան

Սեբաստիոյ վիճակէն երեսփոխան ընտրուած է Յովհաննէս էֆ . Շամլեան

Սոյն ընտրութեանց օրինաւորութիւնը հաստատելով պատկանելի ժողովոյդ կը ներկայացընեմք ՚ի վաւերացումն :

29 սեպտ . 1872 Ի զիմաց Գործ . Յանձնաժողովոյ Ի Ղալաթիա Առէն-դուլէր Առէն-դուլէր

ՂԵՒՈՆԴ ՎՐԴ . Ս . Պ . Պ . ՓԱՓԱՋԵԱՆ

Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայր Նախագահ Ազգ . Երեսփ . Ժողովոյ

Նրզնկայի եւ Բաքերդի վիճակաց կողմէն հրաժարեալ Բէնիրճեան Գրիգոր էֆ . երեսփոխանին տեղ , նոր երեսփոխան ընտրուած է Թադէոս էֆ . Բաղրատունի

Վառնայի վիճակէն երեսփոխան ընտրուած է Կարապետ էֆ . Քէմալիկեան

Կեսարիոյ հրաժարեալ Մանուկեան Մանուկ էֆ . երեսփոխանին տեղ , Կեսարիոյ Գաւաղական Ընդհ . Ժողովն երեսփոխան ընտրած է Յովհաննէս էֆ . Կիւմրուչեան

Կարսի վիճակէն երեսփոխան ընտրուած է Արքայամ էֆ . Այվազեան

Պրուսայու Գաւառական Ընդհ . Ժողովոյ կողմէն երեսփոխան վերընտրուած է Յովսէփ էֆ . Աղամճանեան

Ղուզղուչնուխ եւ Եճատիլէ միացեալ Թաղից երեսփոխան Ներսէսեան Գրիգոր եւ Եազմաճեան Աւետիս էֆ . ներք Դչ վիճակաւ դադարեալ ըլլալով , այս անգամ նոր ընտրութիւնը կատարուած է , եւ 426 ընտրողներէն 44 ին մասնակցութեամբն երեսփոխան ընտրուած են Ստեփան փայա Ասլանեան Բացարձակ առաւելութիւն էֆ . Ներսիսեան Համեմատ . »

Սոյն ընտրութեանց օրինաւորութիւնը հաստատելով պատկանելի ժողովոյդ կը ներկայացընեմք ՚ի վաւերացումն :

24 նոյեմ . 1872 Ի զիմաց Գործ . Յանձնաժողովոյ Ի Ղալաթիա Առէն-դուլէր Առէն-դուլէր

ՂԵՒՈՆԴ ՎՐԴ . Ս . Պ . Պ . ՓԱՓԱՋԵԱՆ

Տեղեկագրերուն ընթերցումէն ետեւ՝ Ատենապետ էֆ . հրաւիրեց երեսփոխաններն որ կատարուած ընտրութեանց օրինաւորութեան նըկատմամբ որ եւ է ղիտողութիւն մը , եթէ ունին , յայտնեն :

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱՋԱՆ .— Գիտել արժան է որ Կիւմրուչեան էֆ . ին երկու գաւառական վիճակաց կողմէ միանգամայն երեսփոխան ընտրուած է :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ .— Ընտրութեանց վաւերացումէն ետեւ՝ ըստ օրինի կը հարցուի թէ՛ որ դաւառին երեսփոխանութիւնը կընդունի :

3 ԿՈՆԳՐԱԿ ՎԵՋ . ԿԱՔՈՂԻԿՈՍԻ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ .— Նախնթաղնիստի ատենադրութիւնը թէեւ խմբագրուած , սակայն ապակին տպագրուած չլինելուն՝ Դիւանը չէ կըրցած երեսփոխանաց հաղորդել զայն եւ չլինարալ գէթ յատենի աստ կարգալ , վասն զի ատենագրութեանց ընթերցումը ժողովոյ որոշման դէմ է : Արդարեւ ցանկալի էր որ մին կամ մյսր կատարուէր , որպէս զի ինչ որ անցեալ նիստին խօսուեցաւ Վեհ . Կաթուղիկոսի կնիդակին առթիւ , նորոգուէր մեր մտայ մէջ , բայց պիտի նորոգուէր ընդ նմին նաեւ ցաւալի գէպքի մը յիշատակը :

Անցեալ անգամ երեսփոխաններէն մին իւր ընկերներէն միոյն դէմ վարձկան բառը գործածեր է , ասով ո՛չ միայն վիրաւորած է իւր անդամակցին պատիւը այլ եւ այդ բառը կը դաշնի նախ Վեհ . Կաթուղիկոսին ալ : Այս բանին համար բողոքոյ զիր մ'եկած է Պէկեան էֆ . ի կողմէ , որ դատաստան կը պահանջէ հասկում Յանձնաժողովի մ'առջիւ :

Յայտնի է որ ժողովոյ մէջ ըսուած այս տեսակ խօսքերուն զատաւորը ժողովին Ատենապետն է , եւ նախորդ նիստին Ատենապետը փափազեան էֆ . ին հրաւիրեր է որ արտասանած բառը կռէ եւ անպէս դորձած է :

Պէկեան էֆ . ին բողոքին վրայ Դիւանին մէջ խորհրդակցուելով թիչ երեւցաւ այդ ազդը , եւ այսօր զՓափազեան էֆ . ՚ի կարգ կը հրաւիրեմ այդ ըսած բառին համար :

ՊԵԿԵԱՆ Թ . ԷՖ .— Խօսք կուղմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ .— Պէկեան էֆ . ըսի թէ դատաւորն Ատենապետն է ու դատելով զՓափազեան էֆ . ին ՚ի կարգ հրաւիրեցի , անա՛ պատիժը . այս անձնական պարագայն դողուած պէտք է համարիլ :

ՊԵԿԵԱՆ Թ . ԷՖ .— Երկու խօսք միայն պիտի ընեմ , բողոքագիրս՝ որ վեց տողէ կը բաղկանայ , կաղաչեմ որ միանգամ կարգացուի . այնուհետեւ ժողովն ազատէ զայն նկատողութեան առնուլ կամ ո՛չ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ .— Կը կարգամ ուրնմն Ձեր բողոքագիրը եւ այնուհետեւ ժողովոյն կամաց կը զիմեմ հասկնալու համար թէ՛ իմ տնօրինած դատապարտութիւնս բաւակա՞ն է , թէ՛ ո՛չ :

Եւ անաւասիկ բողոքագիրը ,

Վսեմ . Ատենապետ Ազգ . Երեսփոխանական Ժողովոյ Ընդհ . Ժողովոյ վերջին նստին մէջ ազգա-

Ընտրութեանց վրայ ուրիշ դիտողութիւն անդի չունենար , հետեւապէս Ատենապետ էֆ . քուէի կը գնէ զմտոք եւ փողովն ընդհանուր հաւանութեամբ Գործադիր Յանձնաժողովոյ տեղեկագրերն ընդունելով կը հանտանաէ կատարուած ընտրութիւններն :

2 ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ՔԱՂ . ԺՈՂՈՎՈՅ ՉՈՐՍ ԱՆԴԱՄՈՅ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ .— Ինչպէս կը յիշէք , Քաղ . Ժողովոյ անգամներէն չորսը հրաժարած եւ Ընդհ . Ժողովն ալ անոնց հրաժարականը ընդունած լինելով ասիէ առաջ Յանձնաժողով մը կարգեր էր ետանպատիկ թուով ընտրելեաց ցուցակ մը պատրաստելու պաշտօնով :

Այս Յանձնաժողովն իւր պաշտօնը կատարելով ընտրելեաց ցանկը բերեր է արգէն , ուստի ժողովին կը մնայ այժմ ընտրութեան գործը , զոր կրնայ կատարել հոս այս պահուս կամ ՚ի վերջէ ժողովէն դուրս , ինչպէս որ յարմար դատի :

ԻԻԹԻԻՃԵԱՆ Կ . ԷՖ .— Կառավարկեմ որ ընտրութիւնն յատենի ժողովոյ կատարուի եւ անմիջապէս :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ .— Կրնամք քուէարկութիւնն յատենի ժողովոյ կատարել , բայց գէթ քուէհամարի երկարատեւ գործողութեամբ չեմք ըզբաղիր եւ զայն քննչաց կը յանձնեմք :

Այս տրամադրութեամբ ժողովը կը հաւանի անմիջապէս քուէարկութեան ձեւնարկել , հետեւապէս ընտրելեաց ցանկերն երեսփոխանաց կը հաղորդուին եւ Դիւանին առաջարկութեամբ ընտրական գործողութեանց քննիչ կ'որոշուին ,

Տ . Հմայեակ Վարդապետ

Տ . Գարեգին »

Այվաթեան Մեկրովպ էֆ .

Այթուն Առաքել »

Քուէարկութեան գործողութիւնը քննչաց միջոցաւ կը կատարուի , որու 49 երեսփոխանք կը մասնակցին , եւ յետոյ Ատենապետ էֆ . ՚ի ազդարարութեան վրայ՝ քննիչք իրենց հրովորութեան ներքեւ ունելով քուէտուփը , ժողովէն կը մեկնին այլուր , քուէհամարի գործողութիւնն առանձինն կատարելու եւ արդիւնքը ժողովին բերելու համար : Եւ Ատենապետ էֆ . օրուան կարգի յաջորդ խնդիրը ձեռք կառնու :

յին երեսփոխաններէն Փափազեան Ստեփան էֆ. ին ամենայն Հայոց Վեհ. կաթողիկոսին կողմանէ Ընդհ. ժողովոյ ուղղեալ կոնդակին վրայ խօսած ատեն, « Զեղի պէս վարձեալ երեսփոխաններ » ըսելով զիս եւ ինձ համարեալ երեսփոխանները թշնամանեց :

Ես իմ մասիս չեմ հանդուրժեր այս անուանարկութեան, որ միանգամայն ծանր ամբաստանութիւն մ'է, եթէ իրօք ես վարձեալ եմ, Սահմանադրութեան 674 յօդուածին արամադրութեանը ոյժովը ազգային երեսփոխանութեան պաշտօն վարելու իրաւունքէն զուրկ եմ, կը բողոքեմ այդ անուանարկութեան դէմ, եւ կը պահանջեմ որ Փափազեան էֆ. ին հրաւիրուի պատկառելի ժողովոյդ ատենանը կամ անկէ կաշմեալ Յանձնաժողովոյ մ'առջեւ իր ամբաստանութիւնը հաստատել :

Այս իմ իրաւացի բողոքս, Ատենապետ էֆ. Զեք միջնորդութեամբ կը ներկայացնեմ Ընդհ. ժողովոյ, խնդրելով որ ամեն խնդիրներէ առաջ նկատողութեան առնուի եւ ճշմարտութիւնն երեւան ելնէ, որպէս զի ըստ այնմ եւ ես, եթէ վերոյիշեալ ամբաստանութիւնէն արգարանամ, կարող ըլլամ ժողովոյդ վիճարանութեանցը մասնակցելու, իսկ եթէ ամբաստանութիւնը հաստատուի, երեսփոխանական իրաւունքէս զրկուիմ :

Մնամ խորին յարգանք
 Կ. Պօլիս ամենախոնարհ ծառայ
 24 նոյեմ. 1872 Ազգային երեսփոխան
 Թ. Պէյ

Ատենապետ էֆ. ին սոյն բողոքագիրը կարգալէ ետեւ ջուէի կը դնէ եւ ժողովը մէկ ջուէի դէմ կընդունի Ատենապետ էֆ. ի ըրած անօրէնութիւնը եւ գործադրութիւնը :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ.— Կը բողոքեմ, եւ ժողովը ժամավաճառ չընելու համար պիտի լռեմ, բայց կուզեմ որ այս բողոքս արձանագրուի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Ինչ բանի դէմ կը բողոքէք ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ.— Եթէ միայն ի կարգ հրաւիրելիք զիս, չէի բողոքէր, բայց որովհետեւ դատապարտութիւն բառն ալ յարեցիք, կը բողոքեմ ուրեմն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Ի կարգ հրաւիրելը դատապարտութիւն է, եւ ո՛չ այլ ինչ :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ.— Իրաւունք չունիք, Ատենապետ էֆ. զիս դատապարտելու. կաթողիկոսական խնդրոյն մէջ Պէկեան էֆ. ալ զիս

դաւաճան անուանեց, եւ երբ ատենադրութիւններն երեւան ելնեն, պիտի տեսնուի, Թո՛ղ նա ալ իւր բառերը կշռէ, ես ալ այդ խօսքին դէմ կը բողոքեմ :

ՆԱԽԱԳԱՆ ՍՐԱԱԶԱՆ.— Ուրեմն, Ատենապետ էֆ. Դատաստանական Խորհրդին յանձնեցէք խնդիրը, զատական ատենն չէ այս :

ՊԵՎԵԱՆ Թ. ԷՖ.— Ներեցէ՛ք, Սրբազան Հայր, եղևոնական խնդիր չէ այս, որ դատաստանական ատենանի յանձնուի, այս ժողովէն ծագում առած է մեր դատը, եւ հոս կրնայ տեսնուի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Մտանիչ, դաւաճան բաները դատադարտելի են, բայց ո՛վ գործածեց զանոնք :

ՊԵՎԵԱՆ Թ. ԷՖ.— Ես՛ այդ բառերը եւ ո՛չ մէկ պաշտօնակցիս դէմ գործածեցի, այլ երբ այն նախատինքն եղաւ ինձ անցեալ նիստին, ուրեմն վարձկան մը, մատնիչ մ'եմ եղեր եւ այս ժողովէն պէտք է դուրս ելնեմ, ըսի : Զսէ՛ք էֆ. ներ, ըսէ՛ք ԵՍԵՆՔԵԱՆ էֆ., այնպէս չեղաւ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Այո՛, այո՛ :

Ատենապետ էֆ. զիտեւ տալով թէ ժողովը իւր ջուէով այս խնդիրը գոցած է, կաղաքարէ միւս եւս չխօսիլ անոր վրայ, եւ Վեհ. կաթողիկոսի կոնդակի խնդիրը ձեռք կառնուի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Վեհ. կաթողիկոսի կոնդակին վրայ բացուած վիճարանութիւնը քանի մը առաջարկութիւններ յերեւան բերած է, զորս հարկ կը համարիմ ժողովոյն յիշեցնել վիճարանութեան ընթացքը ուղղելու համար :

Առաջարկութիւն մը կայ, Վեհ. կաթողիկոսի կողմէ ուղուած պատգամաւորները զրկելու, բայց ո՛չ պիտի արտօնութեամբ, երկրորդ առաջարկութիւնն է որ բնաւ պատգամաւոր չը զրկուի, այլ Վեհ. կաթողիկոսին դրուի թէ Ընդհ. ժողովոյ ընթացքը կիսկիոյ կաթողիկոսի ընտրութեան խնդրոյն մէջ բացառիկ է եւ ազգային չկրնար ծրինակ ըլլալ, երրորդ առաջարկութիւն մ'ալ եղած է որ խնդիրը նախապէս Յանձնաժողովոյ մը քննութեան յանձնուի, ուրիշ առաջարկութիւն մ'ալ եղեր է Փափազեան էֆ. ի կողմէ որ կաթողիկոսական յարաբերութեանց խնդրոյն համար Յանձնաժողով մը դրուի եւ անոր յանձնուի այս կոնդակի խնդիրն ալ :

Ահաւասիկ ասոնք են եղած առաջարկութիւններն, որոնց վրայ կը հրաւիրեմ ժողովոյ ուղադրութիւնը :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Գ. ԷՖ.— Արդարեւ կաթողիկոսական յարաբերութեանց եւ կոնդակի խնդիրները միեւնոյն բանն են, եւ երբ ի մի ձուլուելով նկատողութեան առնուին, այն ատեն ո՛չ միայն օրուան կարգէն խնդիր մը պակասած կը լինի, այլ նաեւ խնդիրը փափաքուած լուծումը կը դանկ, փասն զի Վեհ. կաթողիկոսի կոնդակը յարաբերութեանց խնդրոյն անլուծանելի մնալէն յառաջ եկած է :

ԱՂԵՐԷՎԵԱՆ Մ. ԷՖ.— Այս օրերս երկու արժամապատիւ եկեղեցականներ եկան Ռուսաստանէն, մինն է՝ Ներսէս Եպիսկոպոս Կոստանդնուպոլսեցի, միւսն Երուսաղիմայ միաբան Երեմիա Եպիսկոպոս : Այս վերջինը Ներսէս Եպիսկոպոսէն աւելի շատ տեղ, գրեթէ ամբողջ Ռուսաստան պարտեր է. կառաջարկեմ այս եկեղեցականներէն համապատ տեղեկագիր մը ուղել թէ Ռուսաստանի մերազնեցի բարոյական վիճակին եւ թէ՛ Վեհ. Գեորգ կաթողիկոսի կազութեան եւ գործոց մասին : Այս տեղեկագիրը գալէ կտեւ կը շարունակեմք բացուած վիճարանութիւնն աւելի լուսաւոր կերպով :

ԻԽՓԻՆՃԵԱՆ Գ. ԷՖ.— Հախորդ ՚իսար տեղի ունենալէն ՚ի վեր երկու ամիս անցած է գրեթէ, բայց տակաւին տամադրութիւնը մեր ձեռքը հասած չէ, այն վիճարանութիւնները որոնք տեղի ունեցած են այս խնդրոյն վրայ, մեր յիշողութիւնէն խոստոված են : Միայն առաջարկութեանց համապատ քաղուած մը կայ մէջ տեղ, իսկ պատճառաբանութիւնները որոնք ատենադրութիւնը կրնայ յերեւան հանել, չիան, թէ եւ այնքան հարկաւոր են վիճարանութիւնը շարունակելու համար, Աստի ցառալի է որ ատենադրութիւնը չէ կրցած հասնիլ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Կը հրաւիրեմ Ատենապետ էֆ. ին այդ մասին պէտք եղած բացատրութիւնը տալ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Բողոք ատենադրութիւնները խնդրագրուած են եւ փանդոյ յանձնուած, բայց ցուապիւ է որ մեր բոլոր ձեռնաց հակառակ անոնց տպագրութիւնը չաւարտուցաւ այսօր (եւ անկողին ձեռնարկ ընկաւ) ատենադրութիւնը զիւրաւր մեզի չեղան, եւ եթէ ժողովը ազգէ կընթեւորուէր, զայն Վ. Պօլիս քաղաքէն մեզ ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Գ. ԷՖ.— Լուսաւորութեան համար մեկ նիստի ատենադրութիւնը չբաւերոյ ուստի կոնդակէ մը որ կը տեսնուի միւս կողմուցած ատենադրութիւններն ալ ճարտիկ միջոցաւ յարգելի չիլին :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Շատ աղէկ, արդէն ՚իւրանն ալ միեւնոյն ջանքն ունի. (Աթոռը թողլով) եւ հիմա որ ամենքը կոնդակի խնդրոյն վրայ իրենց կարծիքը յայտնած են, ես ալ իրք երեսփոխան իմ կարծիքս կուզեմ ըսել : Ինչպէս արդէն Ատենապետ էֆ. ին յայտնեց համապատիւ, քանի մ'առաջարկութիւններ կան, որոնք իրարու ներհակ զոնազան կարծիքներէ բղինցան, բայց զրոյթէ՛ համաձայնութեան կէտին հասանա՛ չկապակի կողմէն Պէկեան էֆ. ին քննադատութիւններ ընելէ ետեւ՝ առաջարկեց որ ուրեմն Վեհ. կաթողիկոսին ըսել թէ Մայր Աթոռոյ դէմ ո՛չ ոք կուզէ հակառակել եւ այնուհետեւ համաձայնիլ Նորին Վեհափառութեան հետ, եւ խոստանալ որ ազգային մէջ պիտի կրկնուի ինչ որ տեղի ունեցաւ Արսոյ կաթողիկոսին ընտրութեան առթիւ : Միեւնոյն բանն ըսաւ նաեւ Սղոսն էֆ. սա տարբերութեամբ որ Վեկեան էֆ. առաջարկեց նաեւ Վեհ. կաթողիկոսին կողմէ ուղուած երկու պատգամաւորներն զրկել բայց ո՛չ լիազօր արտօնութեամբ, իսկ Սղոսն էֆ. շեռասակար կը համարի դադս : Այսպէս խնդրիմապիւր կողմն ալ չէր հաւանէր պատգամաւոր զրկելու եւ բացուած վիճարանութիւնը միեւնոյն եղբակացուցութեան կուղար կը յանգէր : Առաջարկութեանց ամենէն լաւն է Փափազեան էֆ. ինը, որ է յարաբերութեանց խնդրոյն կարգադրութեանը համար Յանձնաժողով մը կարգել եւ անոր յանձնել նաեւ Վեհ. կաթողիկոսի կոնդակի խնդիրը : Թէ եւ երբեմն Յանձնաժողով մը գործուեցաւ այս նպատակին համար՝ բայց չկրցաւ գործել, փասն զի նախ Վեհ. կաթողիկոսին հաւանութիւնը պէտք էր ստանալ, եւ քանի որ այժմ եղևոնութիւն մը կայ մէջտեղ, ժամ է որ Յանձնաժողովն գրուի : Վեհ. կաթողիկոսին կասկածը թէ ներկայիս համար ՚ի մի. եւ թէ անպագային ճշմարանութիւնն այս է թէ մեզ ո՛չ միայն կասկած ազդելու, որոնք մ'ըրած չենք այլ նաեւ նախանձախնդիր եղք : Առաքանտեան Մայր Աթոռոյ իրաւաստութիւնը պատշաճանելու հերեմն հարկ չկայ քանի չընթանան ամառ գործիքս, այլ որեւէ Վեհ. կաթողիկոսին թէ Յանձնաժողով մը պիտի գրուի յարաբերութեանց խնդիրը կարգադրելու : Այս կերպով թէ Վեհ. կաթողիկոսին կոնդակին պատասխանած կը լինիք, եւ թէ խնդիրն ալ ըստ կարի վերջացած կը համարուի : Այս Յանձնաժողովն ալ լիազօր արտօնութիւն կ'ունենայ Վեհ. կաթողիկոսին հետ բանակցելու, եւ ծրարիք

պատրաստելով ժողովին կը ներկայացնէ :

Այս է նաեւ իմ առաջարկութիւնս :

ՂԱԶԱՐԱՍԵԱՆ Ք. ԷՖ.— Երեսուֆեան էֆ. ի ըրած զիտողութիւններն ու առաջարկութիւնը կրկնելով զարձեալ կըսեմ թէ յարաբերութեանց եւ կոնդակի խնդիրներն միեւնոյն բանն են, եւ այս վերջինը յինքնին պիտի լուծուի, երբ առաջինն իւր կարգադրութիւնը գտնէ :

ԱՍՏՆԱՊԵՏ ԷՖ.— Յարաբերութեանց Յանձնաժողովին համար նախ Ա.ԵՆ. Կաթուղիկոսին պիտի գրուի եւ եթէ զարձեալ պատգամաւոր ուղէ, եւ այս կէտին վրայ սնդէ, այն ատեն կը խօսուի նորէն :

ԱՅՎԱՍԵԱՆ Մ. ԷՖ.— Ես նախ կուզեմ որ այս խնդրոյն անունը ճշգուի, որ օրուան կարգին մէջ անցած է, « Կոնդակ Ա.ԵՆ. Կաթուղիկոսի » անունով, Բայց ի՞նչ կարելի է ըմբռնել ատկէ, ի՞նչ է Ա.ԵՆ. Կաթուղիկոսի կոնդակին նիւթը, անոր ընթերցումը պիտի լինի, թէ ո՛չ վիճարանութեան ենթարկուած է կամ առաջարկութիւն մը կա՞յ եղած, այս ամենը մթին են, Ամեն խնդիր որ օրուան կարգին մէջ կանցնի պէտք է որ իւր բացայայտ անունովը նշանակուի, որպէս զի անոր բուն էթիւնը ի՞նչ որ է հասկցուի որոշակի : Օրուան կարգին մէջ հինգերորդ խնդիր մ'ալ կայ « Կաթուղիկոսական եւ Պատրիարքական յարաբերութիւնք » անունով, Ընթերցողն այնպէս կը հասկնայ թէ առաջարկութիւն մը եղեր է այս մասին որ Յանձնաժողով մը կարգուի, այս յարաբերութիւնները կարգադրելու պաշտօնով, եւ սակայն քաջ կը յիշեմ ես որ երբէք մէկու մը կողմէ այս տեսակ առաջարկութիւն մ'եղած չկայ, որ եւ է մարմնոյ մը կողմանէ որ եւ է խնդիր մ'եկած չէ այս մասին : Գիտէք ուրեմն, Տեա՛րք, ո՛ւսկէ ծագում առած է այդ խնդիրն, եւ ի՞նչպէս մուտ գտած է օրուան կարգին մէջ, Ա.ԵՆ. Կաթուղիկոսին կողմէ այդ վերջին կոնդակը գալէն առաջ՝ հեռագիր մ'եկած էր եւ այդ հեռագրին դալուն վրայ հարցում մը անդի ունենալով որոշուեցաւ որ խնդրոց կարգն անցնի : Եւ Գիւանը խնդրոց կարգն անցունելու համար Կաթուղիկոսական եւ Պատրիարքական յարաբերութիւնք անունը տուաւ անոր, մինչդեռ հարցումն ընողներն այս տեսակ յարաբերութեանց խնդիր մը երեւան բերած լինելու հեղինակութիւնը յանձն չեն առնոր :

ԱՍՏՆԱՊԵՏ ԷՖ.— (Ընդհանրապէս) Խնդրոյն մէջ մտէք, ատենարան էֆ :

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ.— Ես ալ կ'աղաչեմ Յանձնաժողով մը կարգել շուտով եւ այն ատեն այս ամենը կը վերջանայ :

ԱՅՎԱՍԵԱՆ Մ. ԷՖ.— Ըսի ես թէ յարաբերութեանց խնդրոյն հեղինակ չեմ ուզեր եղած լինիլ, եւ այս զիտողութիւնն այժմէն կընեմ որ խնդրոց կարգն ուղղուի, եւ յաջորդ նիստերուն ալ միեւնոյն կերպով չներկայանայ :

ԱՍՏՆԱՊԵՏ ԷՖ.— Եւ այդ զիտողութիւններն են որ ներկայ խնդրոյն չեն վերաբերիր, եւ երբ այսպէս խոտորիք անկէ, չեմ կարող թոյլ տալ, ատենարան էֆ. որ շարունակէք Ձեր խօսքը :

ԱՅՎԱՍԵԱՆ Մ. ԷՖ.— Հիմա կը դառնամ բուն խնդրոյն : Ա.ԵՆ. Կաթուղիկոսը կոնդակ մը ըրելով էր ՚ի պատասխան Քաղաքական ժողովոց գրոյն : Այս կոնդակը՝ որ առաջարկութիւն մը կը պարունակէր, կարդացուեցաւ եւ զանազիտողութիւններ ու առաջարկութիւններ եղան : Ես այս կոնդակի խնդրոյն համար Յանձնաժողով մը կարգելու հարկ չեմ տեսներ, վասն զի կոնդակը եկած ատեն Կրօնական ժողով չկար, եւ Ա.ԵՆ. Կաթուղիկոսը տեսնելով որ Քաղ. ժողովն առանց Կրօնականին կը խօսի իրեն հետ ծանր կէտերու վրայ, ուզեր է անձամբ բանակցիլ պատգամաւորներու հետ : Քանի մը երեսուցամեայ զիտողութիւն ըրին իւրաւամբ որ ուղուած երկու պատգամաւորները զրկուին, բայց ո՛չ լիազօր իշխանութեամբ, ես ալ կը հաւանիմ այդ առաջարկութեան, բայց հիմա քանի որ Կրօն. ժողովը կազմուած է, կըրնամք միանգամ Վարչութեան Խառն ժողովոյ յանձնել, որ իբր Ընդհ. ժողովոյ Մասնաժողովը նկատողութեան առնու Ա.ԵՆ. Կաթուղիկոսի կոնդակն ու առաջարկութիւնն, ՚ի հարկին բանակցելով Նորին Ահնախառութեան հետ, եւ իւր տեղեկագիրը բերէ : Իսկ յարաբերութեանց խնդիրը հեղինակ չունի որ Յանձնաժողով մը կարգել, զայն ուշադրութեան առնուլ հարկ լինի : Եթէ կայ հեղինակ մը, թո՛ղ յառաջ բերէ ուրեմն խնդիրը, եւ անոր էութիւնը բացատրէ :

ԱՍՏՆԱՊԵՏ ԷՖ.— Եթէ ժամանակը ներէր, կընայի համոզել Այվատեան էֆ. ին որ Սոյ խնդրոյն առթիւ առաջարկութիւն եղած եւ Մասնաժողով մը կազմուած է, որ սակայն չէ կըրցած գործել : Բայց խօսքը չերկարելու համար ես հիմա ետ կ'առնում իմ առաջարկութիւնս, եւ այս կոնդակի խնդիրը Ազգ. Վարչութեան Խա-

որն ժողովին յանձնելու համար կը համաձայնիմ Այվատեան էֆ. նախի :

ՊԵՆԵԱՆ Թ. ԷՖ.— Ես Երեսուֆեան էֆ. ի պիտի համաձայնիմ բայց հարկ կը տեսնեմ խնդիրն ամբողջիւ համառօտիւ :

Սոյ կաթուղիկոսի ընտրութեան առթիւ Էջմիածնի Ա.ԵՆ. Կաթուղիկոսը բողոքեց հեռագրով եւ եկեղեցւոյ աւանդութեանց հակառակ գտաւ այդ ընտրութիւնը : Խնդիրն այս վիճակին մէջն էր, երբ Քաղ. ժողովը պատասխանագիր մ'ուղղեց Նորին Ահնախառութեան եւ հակառակը պիղեց, ասոր վրայ Ա.ԵՆ. Կաթուղիկոսին կողմէ կոնդակ մ'եկաւ, որով Նորին Ահնախառութիւնը Քաղ. ժողովոյ պատասխանը մանուածոյ կը գտնէր, եւ երկու պատգամաւորներ կուղէր անոնց հետ անձամբ բանակցելու համար : Մէք չզրիտի կրնամք հիմա Ա.ԵՆ. Կաթուղիկոսին բացասական պատասխան տալ անանց բանաւոր պատճառ մ'ունենալու : Եւ սակայն կրնամք նախ Յանձնաժողով մը կարգել եւ անոր յանձնել որ այս խնդիրը ձեռէ, բոլոր զարձուածքները քննէ, Ա.ԵՆ. Կաթուղիկոսին հետ բանակցի, ապահովութիւններ տայ եւ իւր տեղեկագիրը բերէ : Բայց այս Յանձնաժողովը պէտք չէ որ յարաբերութիւնները կարգադրելու պաշտօն եւ անուն ունենայ, վասն զի երբ Նորին Ահնախառութեան այնպատակին համար առաջարկութիւն մը ներկայանայ, թերեւս անընդունելի դատուի իրաւամբ, ուստի միայն կոնդակի խնդիրը քննելու պաշտօնով Յանձնաժողով մը կարգելու է, միայն թէ Յանձնաժողովոյ տեղեկագիրը գալէ ետեւ՝ եթէ ժողովը պատգամաւոր զրկել յանձն պիտի առնու, երբ Յանձնաժողովոյ պաշտօնին արդիւնքը այդ հարկը երեւան հանէ, ժողովը պէտք է այժմէն գրէ Ա.ԵՆ. Կաթուղիկոսին թէ իւր կոնդակը կարդացուելով յատենի Ընդհ. ժողովոյ, Յանձնաժողովոյ մը յանձնուած չէ պէտք եղած քննութիւնն ընելու եւ տեղեկագրելու համար : Այս եղանակաւ շարժելով նաեւ պարտապատշաճ հետադարձութեան ապացոյց մը տուած կը լինիմք մեր Ա.ԵՆ. Հայրապետին :

ԻՓԵՆԵԱՆ Է. ԷՖ.— Ժողովոյ ատենագրութիւններն անագան երեւան ելնելուն՝ հարկադրուած եմք կրկնել ստէպ, ի՞նչ որ քանիցս ըսուած է արդէն :

Ա.ԵՆ. Կաթուղիկոսն Ազգ. Վարչութեան վերայ անվստահութեամբ նայեր եւ կարծեր է թէ անոր պատասխանը օրինաւոր չէ, մանուածոյ

է կամ բուն բառովն բռնեք խարդան է, հետեւապէս ամբաստանած է ո՛չ միայն Ազգ. Վարչութիւնն այլ եւ Ընդհ. ժողովն ար Ընդհ. ժողովն հարկ է անշուշտ որ պատասխանէ Ա.ԵՆ. Կաթուղիկոսի կոնդակին, բայց ի՞նչ պատասխան պէտք է տալ, այդ ի՞նչը որոշել հարկ է լըրջաբար : Առաջարկուած պատասխաններէն եւ ո՛չ մին կրնայ արուիլ, այլ Ընդհ. ժողովը պէտք է որոշէ իր քուէով թէ Վարչութեան ընթացքը ապօրէ՛ն է, թէ ո՛չ, թէ անոր պատասխանը մանուածոյ է, թէ ո՛չ, եւ այդ քուէին արդիւնքը պէտք է հաղորդել Ա.ԵՆ. Կաթուղիկոսին : Տարբեր ընթացք բունել, Յանձնաժողով կարգել եւ կամ զիջումներ ընել վոխադարձ, այս ամենը տրամաբանական չեն : կը կրկնեմ, Ընդհ. ժողովը որու էութիւնը անագան ուրեմն չնոր՝ ըրին ճանչնալ, ուրիշ բան չէ կարող ընել, այլ միայն Վարչութեան պատասխանը քննել եւ եթէ օրինաւոր չէ, ըստ այնմ զարձանն անօրինել, իսկ եթէ է, գրել բացարձակօրէն Ա.ԵՆ. Կաթուղիկոսին թէ մանուածոյ չէ անոր տուած պատասխանը :

ԱՂԱԲԷԿԵԱՆ Մ. ԷՖ.— Կուզեմ իմանալ թէ ժողովը ինչո՞ւ իմ առաջարկութիւնս ՚ի նկատի չառնուր, առաջարկեցի որ Վարժապետեան ներսէս եւ Երեսուֆեան Կաթուղիկոսներէն տեղեկագիր ուղուի Էջմիածնի Կաթուղիկոսին եւ Թուսաստանի մերադնէից վիճակին վրայ, վասն զի եթէ յարաբերութեանց համար Յանձնաժողով պիտի կարգուի, այդ տեղեկութիւններն խիստ հարկաւոր են, վասն զի կրկնել թէ Ա.ԵՆ. Կաթուղիկոսը Ջալալեան Եպիսկոպոսի հալածանոց ներքեւ ընկեր է, եթէ ստոյգ է այս, ուրեմն մեր պաշտպանութեան կը կարօտի Նորին Ահնախառութիւնը, եւ պատեն առիթ է դործով ցոյց տալ թէ մենք սառած չեմք Էջմիածնայ մեր Մայր Աթոռէն :

ԱՍՏՆԱՊԵՏ ԷՖ.— Խնդրէն դուրս են այդ խօսքերը :

ԱՂԱԲԷԿԵԱՆ Մ. ԷՖ.— Խնդրէն դուրս կամ ներս, այս է իմ կարծիքս :

(Միծաղք)

ԻՌԹԻՆՃԵԱՆ Կ. ԷՖ.— Պէկեան էֆ. ի՞նչ մէկ խօսքին վրայ զիտողութիւն մ'ունիմ ընելիք, կառաջարկէ որ կոնդակի խնդիրն առանձինն Յանձնաժողովոյ մը յանձնուի, յարաբերութեանց խնդիրն ՚ի բայ թողուելով :

Եթէ այս խնդիրներն իրարմէ անջատուին,

և Եանձնաժողովն կոնդակի խնդրով գրադի մի-
այն, զարձակ բանակցութեան պիտի մտնէ
Վեհ. կաթուղիկոսին հետ, եւ այս բանակցու-
թեան էլքը յարարեալութեանց խնդրոյն պիտի
յանդի, եւ բնականաբար բանայ զայն: Այս
գիտողութիւնն ընելով կառավարկեմ Եսուսե-
թեան էֆ. ի հետ որ խնդիրը Ազգ. Վարչութեան
Խառն Ժողովոյ յանձնուի, որպէս զի իւր մէջէն
կարգեալ Խառն Եանձնաժողովոյ մը միջոցաւ բա-
նակցութիւնն սկսի:

ՊԵՏԱՆ Թ. ԷՖ. Իփէկճեան էֆ. ին կուզէ ա-
բոյնէ թէ Քաղ. Ժողովոյ ստ Վեհ. կաթուղի-
կոսն գրուած պատասխանը մանուածոյ է, օրի-
նաւոր է կամ ոչ, բայց այն ատեն հարկ պիտի
լինի խնդրոյն խորը իջնել, մանրամասնութեանց
մէջ մտնել, վիճարանիլ եւ քննել տրուած պա-
տասխանը: Եւ օրեցի Եանձնաժողովոյ մը յանձ-
նել որ նա այդ ամենը կատարէ, Գալով Եթիւ-
ճեան էֆ. ի կարծեաց, որ է Ազգ. Վարչու-
թեան յանձնել խնդիրը, բոլորովն հակառակ
եմ, վասն զի արդէն Վեհ. կաթուղիկոսի գան-
գաւը Վարչութեան դէմ է, որ թէեւ վտխա-
րուած եւ սակայն առաջնոյն շարունակութիւնն
է, հետեւապէս հարկ է Եանձնաժողով մը կար-
գել, իսկ Ազգութեան էֆ. ի առաջարկութիւ-
նքն էջմիածնէն զարձոյ կապիտալայութիւնն ան-
ղեկակիր մը ուղղելու մասին, չեմ կրնար ընդու-
նիլ, վասն զի անպաշտան անձերու տեղեկա-
գրութիւն մը չկրնար իբր պաշտօնական նկատ-
ուիլ եւ ծառայել մեր նպատակին: Եթէ այս
տեսակ տեղեկան քննութիւն մը հարկաւոր է,
այն ատեն պէտք է մարդ գրկել ի պաշտօնէ,
եւ անոնց միջոցաւ կատարել զայն, թերեւս
Խորէն կապիտալայութեան իջմիածին, անոր
յանձնելու է այդ տեղեկագրութիւնը:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ.— Ինչ զիտողութիւն եւ
առաջարկութիւն որ բրու Իփէկճեան էֆ. ին,
համարիտը խօսելով իրաւացի է յոյժ: Վեհ. կա-
թուղիկոսն իւր կոնդակին մէջ Քաղ. Ժողովոյ
պատասխանադրին նկատմամբ մանուածոյ բա-
նը գործածելով խարդախ ըսել կուզէ, եւ ոչ
այսքան, այլ եւ ուրիշաբար կանուանէ Ե-
պիսկոպոստները, որոց զլուսն է մեր Սրբազան
Պատրիարքն ալ, այլ եւ Երեւան Ժողովը ամ-
բաստանելու գիրք մը կը բռնէ Նորին Վեհա-
փառութիւնը:

Մենք ինչ օրով եւ ինչ օրով անպարտա-
նէմք, ինչպէս արտագին Հայաստանեայց եկե-

ղեցւոյ անկախութեան եւ օրինաց պահպանու-
թեան համար կը աքնորդ, եւ Վեհ. կաթուղիկոսն
եւ իւր արտեաններն զմեզ ուրիշ կերպ կը ատեն,
մեր վրայ կը կասկածին, եւ միշտ անգամ մեր
հակառակորդները կը պոստան թէ մեր լեզուն ու-
րիշ ու սիրան ուրիշ են: Մեր հակառակորդնե-
րը՝ չքսեմ բուն բանն զմեզ կասկածելի երևոյց-
նելու չափ յաջողեցան: Իփէկճեան էֆ. ի գի-
տողութիւններն ստոյգ են, բայց լաւ է որ չը
մանեմք այդ պարագաներուն մէջ, եւ վարագոյր
մը քայեմք անոնց վրայ: Իսկ Երեւան կը պա-
տածի որ Պէկեան էֆ. ի հետ համարու գրա-
նուիմ, բայց այս խնդրին Եանձնաժողովոյ մը
յանձնելու մասին համարուած անոր, այս Եանձ-
նաժողովը կարգելով անգամ մ'ալ յոյց տուած
էր ինքեմք թէ որքան կը յարկենք Վեհ. կա-
թուղիկոսն եւ իւր Հայրապետական գահը:

Ազգ. Վարչութիւնը, խնդրեմ, այս խնդրով
մի ծանրաբանէք, Ընդհ. Ժողովոյ եկած է
այն եւ Ընդհ. Ժողովոյ միջոցաւ թող գուր-
կնէ: Եանձնաժողովը կարգեմք ուրեմն եւ մեք
գրադիրք ներքին կանոնադրին քննութեան, ո-
րու էութիւնն ցարդ կը պակիլ, եւ այս պատ-
ճառաւ մեր ատենական ընթացքը հետզհետէ
գայթ ի գոցթ ու անկայուն վիճակ մը կառնու:

ԱՅՎԱՏԵԱՆ Ս. ԷՖ.— Եթէ Վարչութեան կող-
մէ առ Վեհ. կաթուղիկոսն ուղղուած պաշտօ-
նագրին օրինաւոր Վարչութեան մը, այսինքն
կրն. եւ Քաղ. Խառն Ժողովոյ կողմէն լինէր,
այն ատեն անգամներն ալ թէեւ փոխուած, բայց
խնդիրը Վարչութեան յանձնելը թերեւս պատ-
շած չթուէր, սակայն այնպէս չէ, եւ ինչպէս
պահ մ'առաջ գիտակցի Քաղ. Ժողովն առանց կը-
րօնականին այդ նամակը գրել է ինքն ինքնին:

Վեհ. կաթուղիկոսը կատարուած իրողու-
թիւնները հակառակ կը գտնէ Ս. Եկեղեցւոյ կա-
նոնաց, անոնց համաձայն անօրէնութիւն եւ
անձամբ բացատրութիւններ կուզէ: Կը ներեմ,
կըսէ Նորին Վեհափառութիւնը, Ժողովին աչ-
կաբն սկան անգամնց, կը ներեմ վարդապետաց,
կը ներեմ քահանայից բայց չեմ ներէր կը յաւելու,
եպիսկոպոստաց՝ որոնք էջմիածնայ մէջ ձեռնադ-
րուելով ուրիշիւր գիտեն ինչեղեցւոյ կանոնները,
եւ գրած են իրենց ուխտը, հետեւապէս իւր
եպիսկոպոստներուն յանդիմանութիւններ կընէ,
կը հետեւի ուրեմն որ Նորին Վեհափառութիւնը
Ընդհ. Ժողովը չամբաստանէր: Այդ պէտք է որ
Ազգ. Վարչութիւնը որ հիմա կրօնական Ժողովոյ
կազմութեան իւր օրինաւոր անօրէնութիւնը

գտած է, անգամ մ'ալ բանակցի Վեհ. կաթու-
ղիկոսին հետ, եւ այնուհետեւ եթէ հարկ լինի
ուղուած երկու պատգամաւորներն կրնարուին
եւ հրահանգ առնելով կը մեկնին կերթան դէպ
'ի էջմիածին եւ բացատրութիւն կուտան Վեհ.
կաթուղիկոսին եւ կը բանակցին:

ՊԵՏԱՆ Թ. ԷՖ.— Կը կարծէի թէ ատանց
խնդրոյն խորը մանկու Եանձնաժողովը պիտի
կարգեմք, բայց կը տեսնեմ որ այնպէս չ'լինելու
Եթէ հոս պիտի ձեռուի խնդիրը, ըսելիքներ
ունիմ այն ատեն, մեր ընդդիմախօսները նա-
խատինքներ կուղղեն մեզ, զարձուածներ 'ի
գործ կ'ածեն. . . .

ՓԵՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. (Ըր-Վիլ-Էլ) կը բողոքեմ
այդ զարձուածք բառին դէմ, որ խիստ ծանր
կը կշռէ, 'ի կարգ, Ատենապետ էֆ. ի կարգ
հրաւիրեցէք զինքը:

ՊԵՏԱՆ Թ. ԷՖ.— (Շ-Ն-Ն-Էլ) Այդ զար-
ձուածներուն դէմ արդէն բողոքած եմք:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ.— (Ըր-Վիլ-Էլ) կրկին կը
բողոքեմ այդ բառին դէմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Սխալ կը մտնէք, Պէկեան
էֆ. Փափազեան էֆ. ի խօսքերը:

ՊԵՏԱՆ Թ. ԷՖ.— Մեր բողոքը չէինք ու-
ղեր կրկնել, այլ կը ցանկայինք յողուտ Ազգին
խնդրոյն խաղաղական վերջ մը տալ, եւ
Եանձնաժողովոյ մը յանձնել զայն: Բայց այս
պահուս մեր հակառակորդները վարագոյրը
գոցենք, կըսեն,— Փափազեան էֆ. ի խօսքն է
այս— եւ կը յուզեն, կը զրգոնեն խնդրին ու ըղ-
մեղ, Շա'տ աղէկ. մենք ալ պատրաստ եմք
առաջնոցանելու թէ որքան շատ պակասու-
թիւններ գործուեցան Վեհ. կաթուղիկոսին
դէմ, եւ թէ որքան իրաւացի է Նորին Վե-
հափառութեան գանգաթը: Բայց նորէն խնդիր
չեմք ուզեր յուզել, այլ կը փափաքեմք որ
քուէն որոշէ թէ խնդիրը Եանձնաժողովոյ պի-
տի յանձնուի, թէ ոչ յատենի ատտ պիտի յուզ-
ուի, եւ այս վերջին պարագային մէջ կսկը-
սիմք երկուստեք խօսիլ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Խնդիրը վիճարանութեան
ներքեւ գրուած է, եւ եթէ դձեղ կը գրգռեն,
գուր տուէ՛ք Պէկեան էֆ. հանդարտութեան օ-
րինակը: Բայց վայրկեան մ'առաջ այնպիսի ա-
ղաղակաւ կը խօսէիք Փափազեան էֆ. ի դէմ,
որ բիւր փաստ ալ մէջ բերէիք չպիտի կրնա-
յիք համոզել զես թէ կիրքէ անմասն էք:

Դուք ամենքդ ալ եթէ այս խնդիրը իբր ըս-
կըզբան ու համոզման խնդիր մը կը նկատէք,

մերկայե՛ք Ձեր կրքերը եւ լրջօրէն եւ հան-
դարտութեամբ վիճարանեցէ՛ք:


ՊԵՏԱՆ Թ. ԷՖ.— Ես ոչ ոք գրգռած եմ
երբէք, եւ արձանագրութիւններն վկայ ունիմ
ինձ որ մէկու մը դէմ նախատական բառ մ'ար-
ձակած չեմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Անա՛ հիմայ ատանց կը բի
կը խօսիք:

ՊԵՏԱՆ Թ. ԷՖ.— Ես կրիմք չեմ խօսիլ,
այլ զգացմամբ, եւ այս ալ եթէ լաւ է, բնու-
թեան օժիտն է, եթէ ոչ պատուհասը:


ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Խնդրին այն աստիճանը
հասաւ որ եթէ չ'լուծուի ալ, գէթ վերջ մը
գտնէ, ինչպէս կառավարկեն, Վարչութեան
Խառն Ժողովոյ կամ յատուկ Եանձնաժողովոյ մը
յանձնուելով որ զայն 'ի քննին տունու եւ վե-
բըստին այս ատենար բերէ: Բայց կը տեսնեմ
որ այս խնդիրը չպիտի լուծուի հեշտիւ, վասն
զի եթէ մանուածոյ բան մը կայ նոյն իսկ խըն-
դիրն է, կը տեսնէք թէ Ընդհ. Ժողովոյ մէջ
որքան անհամաձայնութիւն, եւ Ազգին մէջ
ալ որքան կուսակցութիւն կայ այս խնդրոյն
համար, որ քաղաքականութեան կողմեր ալ
ունի իւր մէջ: Այս կուսակցութիւնները զերար
կասկածանայ ներքեւ ձգած ատելութեամբ կը
վարուին իրարու հետ, եւ խնդիրը կը յուզեն,
կը բորբոքեն այնպէս որ Ազգին շահուց, Սուրբ
Աթոռոյն օգտին եւ իրաւանց համաձայն զայն
լուծելու համար ինչ պայմաններ որ պէտք են,
կը պահսին մեր մէջ գժրաղղարար, եւ զմեզ
աւելի գժար զիրքի մը մէջ կը թողուն: Փա-
փաքուած լուծումը ձեռք բերելու համար, մեր
գաղափարներն յտակել, լրջմտօրէն վիճարա-
նիլ եւ համաձայնիլ հարկաւոր են, եւ այնու-
հետեւ ես կը կարծեմ թէ Վեհ. կաթուղիկոսին
առաջարկած միջոցը, այն է պատգամաւոր
ղրկել, է՛ն շաւաղոյն միջոցն է խնդրոյն էլքին
հասնելու համար, վասն զի Վեհ. կաթուղիկոսն
ինչ աչքով որ կը նայի մեր գրեւորն վրայ,
մեք ալ թերեւս նոյն աչքով նայինք իւր կոն-
դակին վրայ, եւ այս կերպով կատարուած գրակ-
ցութիւն մը հետզհետէ խնդիրը խրամատէ: Այո՛,
երկու պատգամաւոր պէտք է զրկել, բայց նախ
անհրաժեշտ է գտնել եւ որոշել թէ ինչ է այն
սկզբունքը, զոր Ժողովը պատգամաւորաց պի-
տի յանձնարարէ: Իրեւին է մեզ այս սկզբուն-
քը որոշել մեր մէջ քանի մը ժամ խօսելով, հե-
րիք է որ կը բերն ու հին ատելութիւնները մէկ

ԳԻՆ 2 ՂՐՈՒՇ



Ք

ՍՆՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՍՆՏՈՒԿԻՆ



Վր ժառուի ի Դիւանատան Պատրիարքարանի , և կը գտնուի
Եկեղեցեաց բանկալները :